




# հրական լուծումներ

2016 Տարեկան հաշվետվություն  
Annual Report





# Բովանդակություն

## TABLE OF CONTENTS

6	Բանկի գործադիր տնօրենի ուղերձը MESSAGE OF THE EXECUTIVE DIRECTOR	44	Ռիսկերի կառավարում RISK MANAGEMENT
12	Բանկի գործունեության հիմնական ուղղությունները MAIN ACTIVITIES OF THE BANK	48	Ներքին հսկողություն ԵՎ առլիտ INTERNAL AUDIT
16	Վարկավորում LENDING	52	Անձնակազմի կառավարման քաղաքականություն HUMAN RESOURCE MANAGEMENT
24	Ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորման գործիքներ FACTORING AND TRADE FINANCE	55	Ֆինանսական արդյունքներ FINANCIAL RESULTS
27	Ներդրումային բանկային ծառայություններ INVESTMENT BANKING SERVICES	60	Անկախ առլիտորի եզրակացություն և ֆինանսական հաշվետվություններ INDEPENDANT AUDITORS REPORT
36	Մարքեթինգ MARKETING	76	Օգտակար տեղեկատվություն Բանկի մասին OTHER USEFUL INFORMATION ABOUT THE BANK
39	Տեղեկատվական տեխնոլոգիաներ INFORMATION TECHNOLOGIES	78	Բանկի արտասահմանյան թղթակից բանկերի ցանկը FOREIGN CORRESPONDENT BANKS

# Բանկի գործադիր տևորենի ուղերձը

MAIN ACTIVITIES OF THE BANK



ԳԵՈՐԳ  
ՄԱՉԱՆՅԱՆ

GEVORG  
MACHANYAN

Տնօրինության նախագահ  
Ռանգավայրի տնօրին  
Chairman of the Management Board  
Executive Director

## Յարգելի տիկնայք և պարոնայք

2016թ.-ի ընթացքում Բանկը աճ է գրանցել գրեթե բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշների՝ այդ թվում նաև զուտ շահույթի գծով և 2016թ.-ի գործունեության արդյունքներով ծևավորել շուրջ 3.3 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթի մեծություն կամ 36%-ով ավելի քան պլանավորված էր 2016թ-ի համար: Արդյունքում Յայաստանի Յանրապետության տարածքում գործող 17 առևտրային բանկերի ընդհանուր թվում զուտ շահույթի մեծությամբ Բանկը զբաղեցրել է 5-րդ, իսկ ROA և ROE ցուցանիշներով համապատասխանաբար 1-ին և 4-րդ տեղերը: 2016թ-ի գործունեության արդյունքներով ևս մեկ աշխատողին բաժին ընկնող զուտ շահույթի մեծությամբ Բանկը պահպանել է համակարգի առաջատարի դիրքը:

Բանկի գործունեության ընդլայնման, մրցակցային դիրքերն ամրապնդելու և 01.01.2017թ-ից բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը 30 մլրդ ՀՀ դրամ սահմանելու ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի որոշման պահանջներին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի համապատասխանության ապահովման նպատակով Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը մարտին

Dear Ladies and Gentleman,

In 2016 the Bank has growth almost in all financial key indicators including net profit, which was AMD 3.3 bln in 2016 or 36% more than was planned for the reporting year. And, as a result, between 17 comercial Banks in Armenia with net profit amount the Bank was at the 5th place, with ROA and ROE indicators at the 1st and 4th places. As well as in 2016 with

ավելացվել է 8 մլրդ. ՀՀ դրամով, որի արդյունքում այն 31.12.2016թ.-ի դրությամբ կազմել է շուրջ 35 մլրդ ՀՀ դրամ:

Չնայած բանկային համակարգում առկա մրցակցությանը՝ Բանկը կարողացել է պահպանել իր կողմից առաջարկվող պրոդուկտների գծով մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ:

2016թ.-ին Բանկը վերանայել է իր կողմից մատուցվող ծառայությունների որակը և ապահովել է մատուցվող ծառայությունների քանակական աճ, ինչպես նաև մշակել և ներդրել է նոր պրոդուկտներ:

2016թ.-ին Բանկը «Յայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի (ՅԱԱԳ-ի) հետ ստորագրել է համագործակցության հուշագիր՝ հաճախորդներին նախարարական գործընթացում, ինչպես նաև հետաձգված վճարման պայմանով արտահանումների պարագայում ՅԱԱԳ-ի կողմից թողարկված ապահովագրական վկայագրի ապահովությամբ ֆինանսավորում առաջարկելու նպատակով:

2016թ.-ին Բանկը «Ասիական Զարգացման բանկ»-ի հետ կնքել է վերականգնվող վարկային գծի պայմանագիր՝ հաճախորդներին ներմուծման և արտահանման համար տրամադրվող կարծածմկետ ֆինանսավորման նպատակով:

2016թ.-ի ընթացքում շարունակվել է

the net profit per employee indicator the Bank maintained the leading position in the banking system.

In order to conform with the requirement set by the Central Bank of RA on rising minimum total capital threshold of the banks up to AMD 30 billion since 01.01.2017, as well as to expand business and strengthen competitive position, the Bank has increased total regulatory capital with AMD 8 bln and as of 31.12.2016 it amounted to about AMD 35 bln.

Despite the competition in the banking system the Bank was able to offer competitive terms of products and attract new customers.

In 2016 the Bank reviewed the quality of its services and increased their quantity, as well as designed and introduced new products.

At the first half 2016 the Bank signed a memorandum with Export Insurance Agency in order to finance its customers in the stage of pre-exporting with "Export Insurance Agency" certificate as a collateral.

In 2016 the Bank signed a revolving

համագործակցությունը նաև Բանկի ռազմավարական գործընկեր ՎՀԲԲ-ի հետ, FCI միջազգային ֆակտորինգային ընկերության հետ, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի հետ, «Ազգային Հիփոթեքային» և «Քնակարան Երիտասարդներին» ՎԿԿ ՓԲԸ-ի հետ և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է համագործակցությունը «Եվրոպական Ներդրումային Բանկ»-ի հետ «Գյուղատնտեսության և գրոսաշրջության բնագավառի ՓՄՁ-ների վարկավորում» ծրագրի շրջանակներում: Առաջին փուլի արդյունքներով Բանկը եղել է առաջնը ծրագրի հետ համագործակցող բոլոր բանկերի շրջանում ֆինանսավորված ծրագրերի քանակով և տարվա վերջին դիմել է նոյն ծրագրի երկրորդ տրանժին մասնակցելու համար:

Հատկանշական է նաև, որ 2016թ.-ին «Շիրակի մարզի տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրի» շրջանակներում իրականացվել է առաջին ֆինանսավորումը: Ծրագրի շրջանակներում պարուն Վարտան Սիրմակեսի կողմից տրամադրված միջոցներով 1 մլն ԱՄՆ դրամ գումարի չափով, տարեկան 5% տոկոսադրույթով ֆինանսավորվել է Գյումրիում գտնվող տեքստիլ արտադրությամբ գրաղվող ընկերության կողմից ներկայացված պրոյեկտը:

Հաճախորդների թվաքանակի աճին զուգահեռ Բանկը 2016թ.-ին շարունակել է հաճախորդների բարձրորակ սպասարկումը՝ նրանց առաջարկելով ինչպես ավանդական, այնպես էլ հաճախորդների կարիքների բավարարմանն ուղղված այլնուրանքային ծառայություններ:

2016թ.-ին Բանկն էական ձեռքբերումներ է ունեցել նաև ներդրումային գործունեության բնագավառում:

Բանկը շարունակել է իր ակտիվ ներդրումային գործունեությունը՝ պահպանելով պետական

credit line contract with Asian Development Bank for short-term financing to importers and exporters.

During the reporting year the Bank continued to enhance cooperation with its strategic partner European Bank of Reconstruction and Development (EBRD), as well as with Factors Chain International (FCI), with German Armenian Fund (GAF), with "National Mortgage" and "Home for Youth" UCO CJSCs.

During the reporting year the Bank has continued cooperation with European Investment Bank within the scope of agriculture and tourism. In the frames of this program the Bank took the first place among other banks with the number of financed projects and at the end of 2016 has applied for participation in the second tranche of the program.

It is worth mentioning that in 2016 within the scope of "Project aimed to the development of Shirak region" was done the first financing. In the frames of this program the company engaged in textile production in Gyumri was financed from resources provided by Vartan Sirmakes with USD 1 mln with 5% annual rate.

Along with the increasing number of customers, in 2016 the Bank continued providing high quality service by offering not only traditional but also alternative services to meet customers' needs.

In 2016 the Bank had significant achievements in its investment activity area as well.

պարտատոմսերի շուկայի Գործակայի կարգավիճակը և հանդիս գալով որպես իր հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի մարդեթմեյթեր:

Հարկ է նշել, որ Բանկն իրականացրել է ներդրումներ նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված 2020թ. և 2025թ. մարվող Եվրոպարտատոմսերում, ընդհանուր 16 մլն ԱՄՆ դրամ անվանական ծավալով:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով ֆոնդային բրոսայում իրականացվել է թվով 68 գործարք՝ 2.5 մլն ԱՄՆ դրամ ընդհանուր անվանական արժեքով և 2.6 մլն ԱՄՆ դրամ գնման գնով:

2016թ. ընթացքում Բանկն իրականացրել է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն ՎԿԿ» ՓԲԸ կորպորատիվ պարտատոմսերի թվով 4 տրանժների տեղաբաշխում 5.6 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, որն ընդհանուր գումարով կազմել է 5.7 մլրդ ՀՀ դրամ:

Մենք մտադիր ենք շարունակել աշխատել նոյն եռանդով, խանդավառությամբ և վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին և հետամուտ լինելով հաջորդ տարիների մեր ռազմավարական նպատակների իրագործմանը:

Բանկի անձնակազմի անոնից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Խորիրդին և Բաժնետերերին՝ Բանկին ցուցաբերած վստահության և աջակցության, ինչպես նաև փոխշահական համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի անձնակազմին՝ պրոֆեսիոնալ և նվիրված աշխատանքի համար:

In 2016 as a result of its continuous vigorous activities in the investment market, the Bank held its status of Government Securities market agent and acted as a market-maker for the securities issued by its customers.

It should be noted that the Bank has also invested in eurobonds repaid in 2020 and 2025 issued by the Ministry of Finance with total nominal amount of USD 16 mil.

During the reporting year with bonds issued by the Bank were implemented 68 transactions in stock exchange with total nominal value of USD 2.5 mil and with USD 2.6 mil purchase price.

In 2016 the Bank has implemented the underwriting of corporate bonds of "National Mortgage Company" RCO 4 tranches with total nominal amount of AMD 5.6 bln, which amounted to total of AMD 5.7 bln.

We will strive to work with the same energy, enthusiasm and determination, struggling to be true to our principles and pursuing our strategic objectives for coming years.

On behalf of the Bank's staff I would like to express my gratitude towards our Customers, Partners, Board Members and Shareholders for their trust, support and mutually beneficial cooperation.

I would like also to express my trust and gratitude to the ARMSWISSBANK staff for their demonstrated professionalism and commitment.



# Բանկի ղեկավար անձիք

MANAGEMENT OF THE BANK

ԿԱՐԵՆ  
ՏՈՒՐՅԱՆ

KAREN  
TURYAN



Գործադիր տնօրենի տեղակալ -  
Ներդրմանի ղեղարտաճենութի  
տնօրեն

Deputy Executive Director -  
Director of Investment Department

ԳՐԻԳՈՐ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

GRIGOR  
HOVHANNISYAN



Գործադիր տնօրենի տեղակալ -  
Վարկավորնան  
ղեղարտաճենութի տնօրեն

Deputy Executive Director -  
Director of Lending Department

ԱՆԺԵԼԱ  
ԲԱՐԵԳԻՅԱՆ

ANZHELA  
BARSEGHYAN



Բիզնեսի զարգացման  
ղեղարտաճենութի տնօրեն

Director of Business  
Development Department

ԳԵՎՈՐԳ  
ԽԱՉԱՏՐՅԱՆ

GEVORG  
KHACHATRYAN



Գործադիր տնօրենի տեղակալ -  
Հաճախորդների սպասարկման  
ղեղարտաճենութի տնօրեն,

Deputy Executive Director -  
Director of Customer  
Service Department

ԳՐԻԳՈՐ  
ՄՈՎՍԻՍՅԱՆ

GRIGOR  
MOVSISSYAN



Գործադիր տնօրենի տեղակալ -  
Ոհսկերի կառավարման  
ղեղարտաճենութի տնօրեն

Deputy Executive Director -  
Director of Risk Management  
Department

ՍԵԴՐԱԿ  
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

SEDRAK  
BAGHDASARYAN



Գլխավոր հաշվառահական  
հաշվառման հաշվառման  
և հաշվետվությունների  
ղեղարտաճենութի տնօրեն

Chief Accountant -  
Director of Accounting and  
Reporting Department

# Բանկի գործությունները

## հիմնական ուղղությունները

MAIN ACTIVITIES OF THE BANK

ԱՐՄՍՎԻՍԲԱԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, գործունեությունն իրականացնում է կորպորատիվ և ներդրումային ուղղություններով՝ ներդնելով միջազգային բանկային համակարգում ընդունված փրայվիթ բանկային (Private banking) տեխնոլոգիաները:

Բանկը մշտապես աշխատանքներ է իրականացնում հաճախորդների անհատական կարիքների բացահայտման ուղղությամբ՝ առաջարկելով վերջիններիս բավարարման համապատասխան ֆինանսական լուծումներ:

ԱՐՄՍՎԻՍԲԱԿ-ն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համային ծառայություններից լայն տեսականույն՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ծկուն սիստեմներ, առևտությունների ֆինանսավորում և այլն) մինչև ժամանակակից բանկային ծառայություններ (այլնտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարտ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):

Առևտությունների ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային և արտարժության ածանցյալ գործիքները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական ու միջազգային շուկաներում՝ ընձեռնելով նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն:

Բացի այդ, ֆինանսավորման ածանցյալ գործիքների միջոցով՝ Բանկի հաճախորդներն արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը:

Remaining loyal to its policy, ARMSWISSBANK conducts its activity in the areas of corporate and investment banking as well as introducing private banking principles accepted in international practice.

ARMSWISSBANK stands out by the wide range of services provided to its corporate clients including both traditional (payment and settlement services, lending services, flexible deposit schemes, trade finance, etc.) and non-traditional services (alternative financing, factoring, forward, swap, option, financial consulting, etc.)

Trade finance, factoring as well as commodity and financial derivatives instruments mainly designed for clients engaged in importing and exporting activities to support their competitiveness in local and international markets and facilitate new markets penetration.

The Bank's clients can improve risk diversification and manage their cash flows more efficiently through derivatives.

One of the Bank's main strategic directions is investment banking. The Bank offers its customers a wide range of investment instruments, such as stocks of American, European and Russian companies and investment funds, depository notes, government and corporate bonds, commodity futures as well as repo agreements and marginal operations with foreign securities, transactions with gold

Բանկի ռազմավարական ուղղություններից է ներդրումային բանկային ծառայությունների մատուցում: Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի, ինչպես նաև ամերիկյան, եվրոպական, ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆինանսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ուկով գործառնություններ և այլն:

Ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար ԱՐՄՍՎԻՍԲԱԿ-ն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

ԱՐՄՍՎԻՍԲԱԿ-ը, առաջատար դիրք գրավելով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում և հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, հաճախորդներ է շուկա ստեղծողի (մարդեթմեյքեր) գործառնություններ՝ նպաստելով արժեթղթերի հայաստանյան շուկայի իրացվելության բարձրացմանը:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթթ՝ արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառական ծառայություններ, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման և «ԱՐՄՍՎԻՍԲԱԿ» բրենդի առաջմղման ապահովման գործում:

including metal accounts, etc.

In order to cope with the market challenges and to develop new investment projects successfully, ARMSWISSBANK offers underwriting services to its corporate clients.

As one of the leaders in the Armenian government securities market and a government securities agent of RA, ARMSWISSBANK acts as a market maker to enhance liquidity of the Armenian securities market. ARMSWISSBANK offers its clients tailor-made services, including development of individual, corporate and other types of securities portfolios, brokerage, custodial and consulting services. The flexibility while working with the clients is one of the key factors for the progressive development of the Bank and promotion of "ARMSWISSBANK" brand.



# Վարկավորում

## LENDING

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, առաջնորդվելով Բանկի խորհրդի կողմից հաստատված վարկավորման քաղաքականությամբ, Բանկը վարկավորման գործառույթներ իրականացնելիս հիմնականում նախապատվություն է տվել կայացած կորպորատիվ հաճախորդներին, որոնք ունեն զարգացող բիզնես, բարի համբավ գործարար աշխարհում, կառավարման որակյալ համակարգ, ինչպես նաև ակտիվութեն օգտվում են նաև Բանկի այլ ծառայություններից և գործիքներից:

Բանկը շարունակում է հաճախորդներին առաջարկել կորպորատիվ բանկային ծառայությունների լայն փաթեթ, որը ներառում է վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆթ, բանկային երաշխիքներ, ակրեդիտիվ, գնման պատվերի ֆինանսավորում, արտահանման խթանման ֆինանսավորում, նախագծային ֆինանսավորում, ֆակտորինգ և հաճախորդի կարիքներից բխող այլ ծառայություններ: Մասնավորապես, Բանկը բիզնեսի ընդլայնման կամ զարգացման նպատակով առաջարկում է միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման գործիքներ կապիտալ ներդրումների, էներգաարդյունավետության բարձրացման և/կամ շրջանառու միջոցների համարման նպատակներով, կարձաժամկետ ֆինանսավորման գործիքներ՝ առևտորի ֆինանսավորման նպատակով և այլն:

Ավանդական բանկային ծառայությունների մատուցմանը զուգահետև՝ Բանկը անընդհատ ընդլայնում է իր կողմից առաջարկվող նոր պրոդուկտների ցանկը՝ վարկավորման առևկա գործիքների շարժին ավելացնելով նաև "ինվեսթմենթ բենքինգին" ընդու այնպիսի նոր գործիքներ, ինչպիսիք են կապիտալի ֆինանսավորում, բիզնեսի արժեքի գնահատման ծառայությունները և այլն:

During the reporting period, guided by the lending policy approved by the Board of the Bank, well established corporate clients with steady operating businesses, good reputation and high quality management system are given preference over other customers and they benefit from other provided services and products offered by the Bank as well.

The Bank continues to offer its customers a wide range of corporate banking services including loans, lines of credit, overdraft, bank guarantees, letters of credit, purchase order financing, export financing, project financing, factoring and other services based on customer needs.

In particular, for business expansion and development the Bank offers medium or long term financing instruments for replenishment of capital investments, energy efficiency and / or working capital, as well as short-term financing instruments for trade finance, etc.

Along with the traditional banking services the Bank always increases the list of its new services, which are typical to "private banking": capital financing, business valuation services, etc.



Թեև Բանկը մասնագիտացված չէ մանրածախ բանկային ծառայությունների մատուցման բնագավառում, սակայն տվյալ ոլորտում առկա են որոշ վարկատեսակներ, որոնց տրամադրումն անհրաժեշտ է կորպորատիվ հաճախորդների համային սպասարկման տեսանկյունից: Վերոնշյալից նախ հարկ է առանձնացնել իհվիթեքային վարկավորման ոլորտը, որտեղ Բանկը տարիներ շարունակ կայուն աճի տեմպեր է արձանագրում:

Ըստ ապահովածության տեսակների՝ Բանկն առաջարկում է գրավի կամ ընդունելի երաշխիքների դիմաց տրամադրվող վարկեր և առևկա պայմանագրերի կամ դրամական հոսքերի ապահովությամբ տրամադրվող վարկեր: Թեև կարևորելով վարկերի ապահովության նշանակությունը՝ Բանկի կողմից վարկի տրամադրման որոշման համար այն առաջնային դեր չի ունեցել: Ավելին՝ ավանդական վարկավորման գործիքազմի կիրառմանը զուգահետև Բանկը շարունակարար մշակում և համալրում է այն նաև այլնտրանքային ֆինանսավորման գործիքներով:

Բանկի վարկային ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանում Բանկի սեփական ռեսուրսները: Վերջիններիս հաջորդում են տարրեր միջազգային և տեղական վարկավորող ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ծրագրային միջոցները, որոնց միջոցով ֆինանսավորված վարկային պորտֆելի մասնաբժինը ընդհանուր վարկային ներդրումների մեջ 2016թ.-ի վերջի դրույթամբ կազմել է 15.5% (համեմատության համար նշենք, որ նոյն ցուցանիշը 2015թ.-ի ավարտին կազմում էր 11.7%): Յարկ է ընդգծել, որ Բանկը նպատակադրված է անընդհատ ավելացնել ներգրավված ծրագրային միջոցներով ֆինանսավորված պորտֆելի կշռը ընդհանուր վարկային պորտֆելում, քանի որ միջազգային ֆինանսական կառուցների հետ համագործակցությունը մի կողմից մատչելի և երկարաժամկետ ռեսուրսների հաստատուն աղբյուր է հանդիսանում, իսկ մյուս կողմից է նպաստում է

Although the Bank is not specialized in provision of retail banking services, but there are some products in the industry, which are offered to corporate clients in order to make complex package of banking services. From abovementioned it is worth to separate the mortgage lending sector, where the Bank has recorded a steady growth rates.

There are several security types for lending instruments: loans secured by collateral, guarantees as well as by existing contract or cash flow. It should be noted that while Bank highlight the importance of security of loans, but it never played a primary role in determining the loan provision. Moreover, along with the application of traditional lending instruments the Bank continuously develops and complements the alternative financing instruments.

The main sources of the Bank's credit portfolio are Bank's own resources. They are followed by various funds attracted from local and international financial organizations, whose share in the loan portfolio at the end of 2016 amounted to 15.5% (for comparison, the same figure as of the end of 2015 was 11.7%).

It should be noted that the Bank intends to continuously increase the loan portfolio attracted from international financial institutions as on the one hand it is a steady source of long-term resources, and on the other hand, it contributes to the investment of new lending products, technological development and the progress of the Bank.

The Bank currently collaborates with a

Բանկում վարկային նոր պրոդուկտների ներդրման, վարկավորման տեխնոլոգիաների զարգացմանը և առաջընթացին:

Ներկայիս դրույթամբ Բանկը համագործակցում է հետևյալ ֆինանսական կառույցների հետ՝

- «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»՝ ՓՄՁ վարկավորման, Առևտիր ֆինանսավորման և Էներգախնայողության ծրագրերի շրջանակներում,
- «Գերմանահայկական հիմնադրամ»՝ «Վերականգնվող Էներգիայի զարգացման ֆինանսավորում», «ՓՄՁ զարգացում» ծրագրերի շրջանակներում,
- «Եվրոպական ներդրումային բանկ»՝ «Գյուղի և գյուղատնտեսության զարգացում» ծրագրի շրջանակներում,
- «Ասիական Զարգացման Բանկ»՝ Առևտիր ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում,
- «Պրոմսվյազբանկ»՝ Առևտիր ֆինանսավորման ծրագրի շրջանակներում,
- «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և բնակարանային միկրովարկերի շրջանակներում,
- «Բնակարան Երիտասարդներին» ՎԿԿ ՓԲԸ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

2016թ.-ի վերջի դրույթամբ Բանկի վարկային պորտֆել կազմել է մոտ 44.5 մլրդ ՀՀ դրամին համարժեք գումար (ֆինանսավարկային կազմակերպություններին տրամադրված վարկային միջոցների հանրագումարը չհաշվարկած), որը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է ավելի քան 20%-ով և 1.5 մլրդ ՀՀ դրամով գերազանցել 2016թ.-ի համար նախատեսված պլանային ցուցանիշը:

Որպես նախորդ ցուցանիշի աճի հետևանք՝ 2016թ.-ի ընթացքում շուրջ 10 %-ով աճել են նաև ստացված տոկոսային նկամուտները, կազմելով 4.6 մլրդ ՀՀ դրամ:

Ստորև բերված է վարկային պորտֆելի ծավալի և մյուս հիմնական ցուցանիշների վերջին 5 տարվա ընթացքում գրանցված աճի դինամիկան:

number of local and international financial organizations, in particular with:

- "The European Bank for Reconstruction and Development" within the scope of SME lending, Trade finance program and Energy Efficiency program,
- "German-Armenian Fund", within the scope of "Renewable energy development financing" and "SME development" programs,
- "European Investment Bank" within the scope of "Rural and Agricultural Development" program,
- "Asian Development Bank" within the scope of Trade Finance Program,
- "Promsvyazbank" within the scope of Trade Finance Program,
- "National Mortgage Company" UCO CJSC within the scope of mortgage loan refinancing program, as well as energy efficient renovations loans and housing micro loans,
- "Home for Youth" UCO CJSC within the scope of mortgage loan refinancing program,
- "Export Insurance Agency". Within the scope of purchase financing first in Armenia the Bank has invested export promoting program with "Export Insurance Agency" certificate as a collateral. This program already has portfolio amounting AMD 500 million and has a big potential to increase.


By the end of 2016 the credit portfolio of the Bank amounted to AMD 44.5 bln (the aggregate loan funds provided by financial institutions incised), which is about 20% higher than the same indicator last year.

As a result of the previous indicator, in 2016 interest income increased over 10%, amounting to AMD 4.6 bln.

Below is demonstrated the growth of the volume and other basic indicators of loan portfolio during last 5 years.

Վարկային պորտֆելի դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)

Dynamics of the loan portfolio (billion AMD)



Վարկային ներդրումների ստացված տոկոսային եկամուտների դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)

Dynamics of interest income on lending activities (billion AMD)




## Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածության ըստ տնտեսության առանձին ճյուղերի և ոլորտների՝ նվազեցնելով առանձին ճյուղերում վարկերի կենտրոնացումը։ Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի։

2016թ. վարկային պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ տնտեսության ճյուղերի

2016 Distribution of the Loan portfolio by sectors of the economy



## Credit Risk Management

To manage credit risk the Bank always carries out activities and pays particular attention to the diversification of the loan portfolio by the economy sectors decreasing centralization within separate sectors.

Below is the loan portfolio distributed by the economy sectors.





Map data © 2017 Google

# Ֆակտորինգ եւ առեվտրի ֆինանսավորման գործիքներ

## FACTORING AND TRADE FINANCE INSTRUMENTS

Առևտրի ֆինանսավորումը և ֆակտորինգը Բանկի գործունեության գլխավոր ոլղություններից են: Բանկը առևտրի ֆինանսավորման ոլորտում ավանդաբար հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի առաջատարներից մեկը:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ֆակտորինգի, ինչպես նաև միջազգային առևտրի ֆինանսավորման ծառայությունների լայն շրջանակ, մասնավորապես՝ ներքին ռեզրեսով և առանց ռեզրեսի ֆակտորինգ, դերհտորական պարտքի ֆինանսավորում, նախարարտահանման ֆինանսավորում, արտահանման և ներմուծման ֆակտորինգ (միջազգային ֆակտորինգ), ակրեդիտիվ, հնկասություն և միջազգային բանկային երաշխիք:

Բանկը անդամակցում է FCI (Factors Chain International) առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների ցանցին, համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվропական Բանկի (ՎՀԵԲ), Ասիական զարգացման բանկի (ԱՀԲ), Յայաստանի արտահանման ապահովագրական գործակալության (ՅԱԱԳ), ինչպես նաև տարբեր երկրների բանկերի հետ, ինչը թույլ է տալիս մատուցել միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան ֆակտորինգային և առևտրի ֆինանսավորման ծառայություններ:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում 2016թ.-ին Բանկի ամենաակտիվ գործնկերը դարձյալ ՎՀԵԲ-ն է: Վերջինս առևտրի ֆինանսավորման ծրագրի համար նախատեսված սահմանաշահը կազմում է 9 մլն ԱՄՆ դոլար:

2016թ.-ի ընթացքում Բանկը ընդլայնեց համագործակցությունը ԱՀԲ-ի հետ՝ հատկապես կարձամկետ վարկերի վերաֆինանսավորման ոլղությամբ: ԱՀԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի սահմանաշահը կազմում է 2 մլն ԱՄՆ դոլար:

2016թ.-ի ընթացքում Բանկը ԱՖԾ-ի շրջանակներում

Trade Finance and Factoring are one of the main directions of Bank's activities.

In the sphere of Trade finance the Bank usually acts as one of the leaders in the banking system.

The Bank provided to its customers not only factoring, but also international trade finance services, particularly local recourse and non-recourse factoring, accounts receivable financing, pre-export and export financing (international factoring), letter of credits, collection of payments and international bank guarantees.

The Bank is a member of FCI (Factors Chain International) leading factoring companies chain, cooperates with European Bank for Reconstruction and Development (EBRD), Asian Development Bank (ADB), Export Insurance Agency of Armenia, as well as with other internationan Banks, which gives us opportunity to provide our customers factoring and trade finance services matching international best standards.

During 2016 the most active partner of the Bank in the scope of trade finance remained EBRD. The limit, provided by EBRD for TFP transactions is USD 9 mln.

In 2016 the Bank extended its cooperation with ADB, particularly with regard to the refinancing of short-term loans. The limit of ADB TFP is USD 2 mln.

During the reporting year the Bank implemented a 64 transactions within the scope of trade finance amounted to USD 8.4

լիրականացրել է շուրջ 8.4 մլն ԱՄՆ դոլարի չափով 64 գործարք՝ նախորդ տարվա 6.7 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Հաշվետու տարվա ընթացքում Բանկը թողարկել է 1.3 մլն ԱՄՆ դոլարի չափով ակրեդիտիվներ:

2016թ.-ի ընթացքում Բանկը նաև ֆակտորինգային գործարքների զգայի աճ է ապահովել, մասնավորապես՝ տարվա ընթացքում ֆակտորինգային գործարքների ծավալը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 38%-ով և կազմել է 6.1 մլրդ ՀՀ դրամ: Ֆակտորինգի պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է 34%-ով, իսկ ֆակտորինգային գործարքներից ստացված եկամուտը՝ 25%-ով: Նշված արդյունքին Բանկը կարողացել է հասնել գործող հաճախորդների հետ համագործակցության խորացման և նոր հաճախորդների ակտիվ ներդրավման միջոցով: Հաշվետու տարվա ընթացքում Բանկը ներգրավել է ֆակտորինգային 74 նոր հաճախորդ և դերիտոր՝ նախորդ տարվա 60-ի փոխարեն: Բանկի ֆակտորինգային ծառայություններից օգտվում են տնտեսության տարբեր ոլորտները՝ ներկայացնող ընկերություններ, մասնավորապես՝ թեթև և սննդի արդյունաբերություն, մեծածախ և մանրածախ առևտուր, առողջապահություն, տրանսպորտ, քիմիական արդյունաբերություն, հանքարդյունաբերություն, քերմոցային տնտեսություն, տեքստիլ արդյունաբերություն և այլն:

mln instead of previous year USD 6.7 mln. As well as in 2016 the Bank issues letter of credits amounting USD 1.3 mln.


During the reporting year the Bank provided significant increase in factoring transactions, particularly in 2016 the volume of transactions has increased by 38% compared with previous year results amounting to AMD 6.1 bln. Factoring portfolio was increased by 34% and the income from factoring transactions by 25% compared with previous year.

This result was achieved through active cooperation with customers and new customers attraction. So, during 2016 the Bank has attracted 70 new customers and debtors instead of 60, which was previous year. The Bank's factoring services are used by companies representing different sectors of the economy, mainly light and food industry, wholesale and retail trade, health care, transportation, chemical industry, mining, greenhouse industry, textile industry, etc.



Ֆակտորինգին գործարքների տարեկան ծավանները,  
մլրդ ՀՀ դրամ

Annual turnover of domestic factoring (billion AMD)



Բանկը նշանակալիորեն ակտիվացրել է արտահանման ֆինանսավորման գործարքները, որի ծավալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 4 անգամ՝ կազմելով շուրջ 1.1 մլրդ ՀՀ դրամ: Նշված արդյունքը ապահովվել է հաստապես Բանկի և ՀԱՍԳ-ի միջև համագործակցության խորացման շնորհիվ: Բանկը ՀԱՍԳ-ի հետ համագործակցում է ռեռուս 2015թ.-ից՝ արտահանման ֆինանսավորման շրջանակներում, իսկ հաշվետու տարում Բանկի կողմից ՀԱՍԳ-ի հետ համատեղ մշակվել և ներդրվել է նաև նախարարական ֆինանսավորման պրոդուկտը: 2016թ-ի ընթացքում Բանկը հանդիսացել է ՀԱՍԳ-ի ամենաակտիվ գործնկերը ՀՀ բանկային համակարգում:

Բանկը հետևողականորեն ընդլայնում է համագործակցությունը առևտու ֆինանսավորման շրջանակներում գործող գործնկերների հետ և շարունակում է նոր գործնկերների հետ համագործակցության հաստատման ակտիվ աշխատանքները՝ հաճախորդներին առավել ձկուն և մրցակցային ծառայությունների մատուցման նպատակով:

During current year the volume of export financing transactions increased by about 4 times, amounting to about AMD 1.1 bln, which is achieved due to the deepening cooperation between the Bank and the Export Insurance Agency of Armenia. The Bank has been cooperating with EIA since 2015 in frames of export finance, and in the reporting year the Bank and EIA together developed and introduced the pre-export financing product. In 2016 the Bank was the most active partner of EIA in banking system.

The Bank consistently expands cooperation with existing partners within the scope of trade financing, at the same time continuously works on establishing cooperation with new partners, providing most flexible and competitive services to customers.

## Ներդրումային բանկային ծառայություններ

### INVESTMENT BANKING SERVICES

#### ՊԱՐԱՊԻԹՅՈՒՆ, ՌԵԵՍՏՐԱԿԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵՑՈՒԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ

#### CUSTODY SERVICES, REGISTRY KEEPING AND CORPORATE SECURITIES UNDERWRITING

2016թ-ի ընթացքում Բանկը, որպես Հաշվի օպերատոր, շարունակել է նոր հաճախորդների ներգրավել, ինչպես նաև գործող հաճախորդներին ծառայությունների էլ ավելի ընդգրկուն փարեթ առաջարկել: 2016թ-ի ընթացքում Բանկը ռեեստրի վարման պայմանագիր է կնքել 13 թողարկողի հետ (որից 4-ը՝ պարտասումների ռեեստրի վարման գծով), իսկ պահանջայան պայմանագիր՝ թվով 18 հաշվետերի հետ:

2016թ-ի ընթացքում Բանկը շարունակել է ապահովել «ՆԱՍԴԱՔ ՕԸՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի "Bbond" հարթակում Բանկի ցուցակված պարտասումների ամենօրյա երկկողմանի գնանշումը (մարդեթ մեթինգ), որը իրականացվում է «Արմենբրոկ» ԲԲԸ-ն: Հաշվետու տարվա ընթացքում ֆոնդային բորսայում իրականացվել է Բանկի կողմից թողարկված պարտասումներով թվով 68 գործարք՝ 2.53 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով և 2.6 մլն ԱՄՆ դոլար գնման գնով:

Ոեզիդենտ և ոչ ռեզիդենտ ներդրողների կողմից ցուցաբերած Բանկի կողմից նախկինում թողարկված պարտասումների նկատմամբ բավական մեծ պահանջարկը հաշվի առնելով՝ Բանկը նախատեսում է 2017թ-ին թողարկել 10 մլն ԱՄՆ դոլար, 10 մլն Եվրո և 2 միլիարդ ՀՀ դրամ անվանական ծավաններով, համապատասխաբար 7, 6 և 4 տարի մարման ժամկետով և 6.75%, 5.00% և 12.75% արժեկտրոնային եկամտաբերությամբ պարտասումներ:

Պարտասումների նոր թողարկումը նաև նպատակ է հետապնդում Բանկի հաճախորդներին և պոտենցիալ ներդրողներին առաջարկել ներդրման այլ տարբերակ՝ որպես դասական ավանդին այլընտրան:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկն իրականացրել


During 2016 the Bank as Account operator continued both to attract new customers and to expand the range of products portfolio for existing clients. In 2016 the Bank signed registry maintenance agreements with 13 issuers (4 of which were on bond registry maintenance) and custody service contracts with 18 account holders.

In 2016 the Bank's Corporate Bonds are listed in "Nasdaq OMX" OJSC stock exchange "Bbond" section, and bonds bilateral daily quotations (market making) are implemented by "Armenbrok" OJSC. During the reporting year with bonds issued by the Bank were done 68 transactions at stock exchange with USD 2.53 mln total nominal value and USD 2.6 mln purchase price.

Taking into account the high demand from resident and non-resident investors for previously issued Bonds the Bank plans to issue Bonds with USD 10 mln, EUR 10 mln and AMD 2 bln nominal volumes, with maturity of 7, 6 and 4 years and with 6.75%, 5.00% and 12.75% coupon yield.

The new issue of Bonds also aims to offer the Bank's customers and potential investors a different option as an alternative to classical deposit.

In 2016 the Bank implemented the allocation 4 tranches of "National Mortgage Company" RCO CJSC's corporate bonds with AMD 5.6



Է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ կորպորատիվ պարտատոմսերի թվով 4 տրանշների տեղաբաշխում 5.6 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, որն ընդհանուր գումարով կազմել է 5.7 մլրդ ՀՀ դրամ:

2016թ.-ին տեղաբաշխումներից բացի Բանկը շարունակել է իրականացնել շրջանառության մեջ գտնվող թողարկումների գծով մարումների և հերթական արժեկտրոնների վճարումների սպասարկում: Բանկը շարունակել է մասնացել նաև խորհրդատվական ծառայությունների հր կորպորատիվ հաճախորդներին՝ վերջիններիս կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, վերակազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ:

#### ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Հաշվետու տարվա

billion nominal value, which totally amounted AMD 5.7 bln.

In 2016 the Bank continued to carry out not only placements but also the bond payments and redemptions service. The Bank also continued providing consultancy services to its corporate clients regarding capital structure, corporate strategy, restructuring and other issues.

#### DEALING ACTIVITY

In 2016 the Bank continued to actively implement operations with RA government and corporate securities in the domestic financial market. During the reporting year the Bank's operations in the primary market amounted to more than AMD 25 bln and in the secondary market to about AMD 65.8 bln in nominal value. By the way government bonds amounted AMD 5.8 bln by the issue

ընթացքում արժեթղթերի առաջնային շուկայում Բանկն իրականացրել է ավելի քան 25 մլրդ ՀՀ դրամի, իսկ երկրորդային շուկայում՝ ավելի քան 65.8 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ: Ընդ որում, 5.8 մլրդ ՀՀ դրամի պետական պարտատոմս վաճառվել է թողարկողի կողմից պետական պարտատոմսերի հետզնման և ՀՀ ԿԲ կողմից պետական պարտատոմսերի գնման աճուրդների ընթացքում: Բանկն իրականացրել է ներդրումներ նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված 2020թ. և 2025թ. մարզող եվրոպարտատոմսերում, ընդհանուր 16 մլն ԱՄՆ դոլար անվանական ծավալով:

2016թ.-ին ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայում Բանկի կողմից կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործարքների ծավալները ևս աճել են: Հաշվետու տարվա ընթացքում Բանկը գնել է 2.4 մլրդ ՀՀ դրամի և վաճառել 1.5 մլրդ ՀՀ դրամի կորպորատիվ արժեթղթեր:

ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստելու, ինչպես նաև «ԱՐՑԱՍ ՀԵԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված բաժնետոմսերի ու «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի իրացվելիության մակարդակի բարձրացման նպատակով 2016թ.-ի ընթացքում Բանկն իրականացրել է «ԱՐՑԱՍ ՀԵԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված բաժնետոմսերի և «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի երկնորմանի գնանշում՝ կնքելով 924,924 հատ բաժնետոմսերի (մոտ 1 մլրդ ՀՀ դրամի) և 89,617 հատ պարտատոմսերի (մոտ 1 մլրդ ՀՀ դրամի) առ ու վաճառքի գործարքներ:

2016թ.-ի ընթացքում Բանկն իր հաճախորդներին շարունակել է տրամադրել և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավել դրամական միջոցներ՝ օգտագործելով ռեպո գործիք, որի շրջանակներում իրականացված գործարքների ծավալը կազմել է շուրջ 274.6 մլրդ ՀՀ դրամ:

Հաշվետու տարում Բանկը, ներդրումային պրոտֆեյի համալրման նպատակով, առաջնային տեղաբաշխման աճուրդներից ձեռք է բերել ավելի քան 24.7 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր: 2016թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված հետզնման և ՀՀ ԿԲ կողմից պետական պարտատոմսերի գնման աճուրդներին մասնակցության արդյունքում միջոցով Բանկը վաճառել է մոտ 5.8 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր (նախորդ տարվա գումարը

through the auction of government bonds repurchase and through purchase of CBA government bonds. It should be noted that the Bank has also invested in eurobonds issued by the Ministry of Finance and repaid in 2020 and 2025, with total nominal amount of USD 16 mln.

In 2016 the amount of operations with corporate securities of the Bank also increased. Thus, during the year the Bank purchased AMD 2.4 bln and sold AMD 1.5 bln corporate bonds.

To promote the development of the RA stock market, and to increase liquidity of "Artsakh HEK" OJSC's shares and "National Mortgage Company" RCO CJSC's nominal value bonds, in 2015 the Bank gave two-sided quotations for those shares and bonds implementing buy/sell transactions with about 924,924 shares (about AMD 1 bln) and 89,617 bonds (about AMD 1 bln).

In 2016 the Bank continued to allocate funds with its customers and attract funds from other financial organizations, using repo agreements. Overall amount of the mentioned instruments during the year was AMD 274.6 bln.

To increase its investment portfolio the Bank purchased government securities for a nominal value of AMD 24.7 bln from go initial allocation auctions in 2016.

In 2016 through the RA Ministry of Finance's securities repurchase and CBA purchase of government bonds the Bank sold bonds with a nominal value of about AMD 5.8 bln (previous year the indicator was almost the same - AMD 5.7 bln). In the secondary market the Bank sold bonds with a nominal value of more than AMD 29.7 bln and purchased government bonds with nominal value of about AMD 32.8 bln. As a result the Bank's portfolio of government bonds increased by more than AMD 24 bln amounting to AMD 56.8 bln (nominal value).

In 2016 the interest income on the bond portfolio increased by 25.3% as compared to 2015 results, amounting to AMD 4.75 bln.




Նոյն ցուցանիշի՝ 5.7 մլն ՀՀ դրամի համեմատ): Երկողորդային շոկայում Բանկը վաճառել է ավելի քան 29.7 մլրդ ՀՀ դրամ և գնել ավելի քան 32.8 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր: Արդյունքում, 2016թ.-ին Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելի անվանական ծավալն աճել է ավելի քան 24 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով շուրջ 56.8 մլրդ ՀՀ դրամ:

2016թ.-ին պարտատոմսերի պորտֆելից Բանկի ստացած տոկոսային եկամուտը 2015թ.-ի համեմատ աճել է ավելի քան 25.3%-ով՝ կազմելով շուրջ 4.75 մլրդ ՀՀ դրամ, իսկ պարտատոմսերի առ ու վաճառքից ստացված զուտ եկամուտը՝ շուրջ 188.6 մլն ՀՀ դրամ: 2016թ.-ին Բանկը պահպանել է պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

Բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքը և ստացված եկամտի դիմամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

The net income of bought and sold bonds is amounted to about AMD 188.6 mln. It is worth mentioning that in 2016 the Bank kept its status of state debt management agent of RA government.

The structure of the Bank's investment portfolio and income dynamics is presented below:



